17820

ՀԱՄԱԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

# ՎՈՉ ՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՌԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԵՌՆԱՎՈՐՄԱՆ

324(47)
Ո-38

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
ԿԱԶՄԲԱԺՆԻ

16 JUL 2013
17820

Թարգմանեց՝ Կ. ԶԱԼԱԲԻ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 5409.
Заказ № 2648.
Тираж 3000.
Тип. „III Интернационал".

324(47)
Ռ-38
26 SEP 2006
15 JAN 2010
38401Կ

# ՆԱԽ. ՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ, ԻՆՔՆ. ԼԵՌ. ՂԱՐԱ-ԲԱՂԻ ՄԱՐԶԳՈՐԾԿՈՄԻ, ԲԱԳԽՈՐՀՐԴԻ, ԿԻՐՈՎԱԲԱԴԻ. ՆՈՒԽՎԱ ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ, ԲՈԼՈՐ ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ, ՇԵՆԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

## ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ՇԵՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Թանկագին ընկերներ.

17-րդ կուսհամագումարի և ԽՍՀՄ Խորհուրդների 7-րդ համագումարի վճիռների լույսի տակ, Ադրբեջանի խորհուրդներն իրենց առաջ կարևոր քաղաքական խնդիր ունեն — պետության կառավարման գործին գրավել աշխատավորության ավելի լայն մասսաները:

Խորհուրդների այս հիմնական քաղաքական խնդրի լուծման համար, խորհուրդների և աշխատավորության լայն մասսաների միջև կապակցվող օղակը հանդիսանում են խորհուրդների պատգամավորները:

Լինելով ընտրողների առաջապահը, խորհուրդների պատգամավորները պետք է կանոնավոր կերպով հաճախեն խորհուրդների և սեկցիաների բոլոր նիստերին, կատարեն խորհրդի բոլոր հանձնարարությունները, պարբերաբար հաշիվ տան իրենց գործունեության մասին իրենց ընտրողների առաջ:

Խորհուրդների պատգամավորները պարտավոր են լինել հարվածայնության և սոցիալիստական մրցու-

26 SEP 2006

թյան նախաձեռնողներն ու կազմակերպիչները, պարտավոր են իրենց անձնական օրինակով արտադրության մեջ ցույց տալ դեպի աշխատանքը սոցիալիստական վերաբերմունքի օրինակներ, օրինակելի կերպով կատարել նավթի ու բամբակի և աշխատանքի այլ ճյուղերի արտադրական առաջադրությունները և անպայման ձեռք բերել ընտրողների նակազների կատարումը, բոլոր միջոցները ձեռք առնել սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում նկատված թերությունների վերացնելու և հետագա աշխատանքների լավացնելու համար:

Պատգամավորների ուղղակի պարտականությունների մեջ են մտնում —

ա) Ընտրողների հետ ամենօրյա կապ և բանվորների, կոլտնտեսականների, մտավորականների և աշխատավորների լայն մասսաների խորհուրդների գործնական աշխատանքների մեջ ներգրավումը:

բ) խորհրդի որևէ սեկցիայի և այն ձեռնարկի կամ կոլտնտեսության պատախմբակի աշխատանքի մեջ մասնակցել, որտեղ տվյալ պատգամավորն է աշխատում:

գ) խորհրդի ամեն մի պատգամավորի կողմից արդֆինպլանի օրինակելի կատարում, անմիջականորեն գործադրելով ստախանովյան մեթոդը, ցույց տալով անձնական օրինակ:

դ) վերահսկողություն խորհուրդների որոշումների կատարման վրա, ուսումնասիրություն քաղաքային և գյուղական կյանքի ամենակարևոր կողմերի և այն բոլոր միջոցառումների, որոնք նշվում կամ անց են կացվում կյանքում, ինչպես խորհուրդների, նույնպես և տեղական և կենտրոնական իշխանության մյուս օրգանների կողմից:

յե) պարբերաբար հաշվետվություն իր աշխատանքի մասին ընտրողների առաջ, որպես պատգամավոր, նույնպես և սեկցիայի աշխատանքի մասին:

զ) ընտրողների նակազի առաջ շարժել և կանոնավոր կերպով նրանց ինֆորմացիա տալ նրա իրացման աստիճանի մասին:

է) ուշադիր վերաբերմունք դեպի ընտրողների բոլոր պահանջներն ու ցանկությունները, նույնպես և այն կազմակերպությունների ու հիմնարկությունների՝ որոնց հետ նա շփվում է իր աշխատանքներում:

Դրանց հետ միասին, պատգամավորները կապ պետք է պահպանեն և առանձին ընտրողների հետ, որի համար նրանք պարտավոր են տեղեկացնել այդ ընտրողներին իրենց բնակատեղերի և նրանց կողմից տարվող աշխատանքների բնույթի մասին:

Սրան կից ուղարկվում ձեզ Անդրկենտգործկոմի նախագահության ս. թ. մայիսի 20-ի որոշումը՝ Բաքվի, Թիֆլիսի և Երևանի քաղխորհուրդների առանձին պատգամավորների զեկուցումների առթիվ՝ Համադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությունը պարտավորեցնում է ձեզ զեկուցումների ընթացքում լայն մշակել այդ որոշումը «Ոչ մի պատգամավոր առանց խորհրդային բեռնավորման» լոզունգի տակ:

Անդրկենտգործկոմի նախագահության այդ որոշման մշակումը պետք է գործնականորեն արտահայտվի—

ա) Խորհուրդների աշխատանքում պատգամավոր-

ների գործնական մասնակցության աստիճանի աու-գումը.

բ) Պատգամավորների աշխատանքի բարելավումը և նրանց ակտիվության բարձրացումը՝ կուսակցության, կառավարության և տեղական կազմակերպությունների դիրեկտիվների կատարման գործում.

գ) Պատգամավորների կանոնավոր ներգրավումը համապատասխան սեկցիաներում և պատմամբակներում:

Առաջիկա հաշվետու կամպանիան պետք է օգտագործվի խորհուրդների պատգամավորների կողմից այն հաշվետվության համար իրենց ընտրողների առաջ՝ խորհրդում և մասսայական կազմակերպություններում նրանց տարած անմիջական աշխատանքի համար: Դրա հետ միասին, կամպանիան պետք է օգտագործվի խորհուրդների աշխատանքի հետագա ամրապնդման համար, աշխատանքի անընդունակ պատգամավորների հետ կանչելու և նրանց լավագույն հարվածայիններով ու ստախանովականներով փոխարինելու միջոցով, նույնպես և սեկցիաների և պատմամբակների միջոցով ընտրողներին լայն կերպով խորհուրդների գործնական աշխատանքի մեջ ներգրավելու:

Անդրկենտգործկոմի նախագահության որոշման հիման վրա, առաջարկում ենք ձեզ հետագայում սիստեմատիկաբար գործադրել խորհուրդների անդամների հրահանգչական խորհրդակցությունների և զրույցների հրավիրումը՝ սոցշինարարության առանձին հարցերին նվիրված, սիստեմատիկաբար լսել խորհրդի և շրջգործկոմի նախագահությունում և պլենումում առանձին պատգամավորների զեկուցումներն իրենց կատարված աշխատանքի մասին, ամեն մի դեպքում երևան բերելով լավագույն հարվածային – պատգամավորների և առաջավորների դրական փորձը հանձնել հետ մնացողներին:

Անդրկենտգործկոմի որոշման և սույն նամակի մշակումն ավարտելուն պես, անհրաժեշտ է Անդրկենտգործկոմի կազմբաժնին գրավոր զեկուցում ներկայացնել:

Համաադրբեջանյան կենտգործկոմի քարտուղար՝
ՇԱՄՍԱԴԻՆՍԿԻ

Համաադրբեջանյան կենտգործկոմի կազմբաժնի
վարիչ ԿԱՍԻՄՈՎ

Հավելված Անդրկենտգործկոմի նախագահության 1935 թ. մայիսի 20-ի նիստի № 4 արձանագրության 1-ին կետի:

# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ԱՍՖԽՀ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

*Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը, լսելով Բաղխորհրդի պատվիրակներ ընկ. ընկ. Իսա-Զադեյի, Ալիյևայի, Դանիելյայի, Թիֆխորհրդի—Պապավայի, Կըրխաշվիլու, Զաուրի և Յերևանի խորհրդի — Տեր-Ստեփանյանի հաշվետու զեկուցումները, մատնանշում է հետևյալը.*

*ա) Ընկ. Իսա-Զադեն, հանդիսանալով Բաղխորհրդի նավթային սեկցիայի անդամ, սեկցիայի առաջադրանքով ստուգեց Որջոնիկիձեյի անվ. հանքի շահագործման չորրորդ գրուպայի առաջին բնամասային պլանի թերակատարման պատճառները և ձեռնարկում տարած աշխատանքի և կոնկրետ միջոցառումների հետևանքով շահագործման չորրորդ գրուպայի աշխատանքները բավականաչափ լավացան, և նավթահանության ապրիլյան պլանը կատարվեց 102 տոկոսով: Օգնեց յերկու հորերի գործի գցելուն (№№ 692, 718) և ապահովեց յերեք հանքափոր վարպետների բնակարանների նորոգմանը. մասնակցեց յերկրորդ հնգամյակի 3-րդ տարվա փոխառության նախապատրաստմանը և բաշխմանը (ընդգրկված է բանվորների 100 տոկոսը*



*և բաժնեգրվել է 41,917 ռուբ.): Հետաքննելով № 7 կոոպերատիվային կետի և № 4 ճաշարանի աշխատանքները — յերևան հանեց մի շարք չարաշահումներ:*

*բ) Բաղխորհրդի անդամ ընկ. Ալիևան ամրացված էր հացի վաճառման 9 կետերի՝ նրանց սանիտարական դրությունը ստուգելու համար: 4 կետերում յերևան հանեց թերություններ. բացակայում են սանիտարական գրքույկներ, ըմպարաններում ջուր չկա, վաճառողները հագած են կեղտոտ խալաթներ և մի խանութում նա կասեց գնորդների թերակշռում: Այդ բոլոր հարցերի մասին իր ժամանակին հարց բարձրացրեց Բաղխորհրդի առաջ և համապատասխան միջոցներ են ձեռք առնված: 8 հիմնարկություններում և կազմակերպություններում ստուգելով աշխատավորների մթերաքարտերով ապահոված լինելու գործը, յերևան բերեց գրքույկների ապօրինի տացում և համապատասխան միջոցներ ձեռք առավ: Ստուգել է 26 տուն, վորոնցում բանվորների բնակարանները գտնվում եյին հակասանիտարական դրության մեջ, և նրա ցուցմունքով բոլոր բնակարանները կարգի յեն բերված:*

*Հանգստյան օրերին կազմակերպում է չորս շաբաթօրյակ դպրոցի շուրջն աղբը հավաքելու համար և յերկու շաբաթօրյակ՝ Ղալա — Մաշտաղի կոոպերատե-տությունում: Հոկտեմբերյան շրջանում ստուգել է 12 փողոցների ընտանեկան կենդանիների և հաշվի յե առել 57 կով և 26 ձի, և ընդ ամենը, յերևան է բերել, վոր Ֆինբաժնի տեսուչը կաշառք է վերցրել. տեսուչը գործից հեռացված է և դատի յե տրված: Մայիսի 1-ի առթիվ կազմակերպել է փողոցների և տների մաքրելը*

(լուսամուտների ըմանակ, դռները ներկել, աղբի արկղների կարգի բերելը և այլն): Մեծ աշխատանք է տարել տրամվայի և ավտոմոբիլային շարժման խանգարողների և խուլիգանության դեմ պայքարելով: Շրջանի բնակկոոպներում տանտիրուհիների մեջ անց է կացրել «Երկրորդ հնգամյակի 3-րդ տարվա» 30.000 ռուբլու բաժնեգրություն:

գ) Բաղխորհրդի անդամ ընկ. Դանիլովյան, աշխատելով որպես կոմունալ սեկցիայի բյուրոյի անդամ, միաժամանակ ամրացված է յերկու հյուրանոցների («Բոլշայա Մոսկովսկայա» և «Նովիյ Վոստոկ»), վորոնք նրա ակտիվ մասնակցությամբ կարգի յեն բերված: «Նովիյ Վոստոկ» հյուրանոցում կազմակերպել է անգրագիտության վերացման խմբակ 24 հոգու համար: Ակտիվ մասնակցություն է ունեցել փողոցների բարեկարգման գործում: 18 տան հետազոտելուց յերեվան է բերել հակասանիտարական դրություն և շնորհիվ նրա պնդումին մատնանշված բոլոր թերությունները վերացված են: Ակտիվ մասնակցություն է ունեցել ջրի ծախսման խնայողության մեջ, հետազոտել է բաղնիքների, ծովային լողարանների, գարաժների և այլն աշխատանքները:

դ) Թիֆլիսի խորհրդի կապի սեկցիայի բյուրոյի անդամ ընկ. Պատարայան մատնանշում է սեկցիայի թույլ աշխատանքը, պատգամավորները չեն գալիս նիստերին. առանձին դեպքերում սեկցիայի նիստերը չեն կայանում: Այդ ժամանակամիջոցում սեկցիան քննություն է արել 1019 բողոք՝ նամակների և դրամական փոխադրությունների ուշացումների մասին. անկարգությունների և չարագործությունների մասին



հաղորդված է համապատասխան օրգաններին՝ միջոցներ ձեռք առնելու համար:

յե) Թիֆլիսի խորհրդի անդամ ընկ. Կըլխաշվիլին, աշխատելով բնակարանային սեկցիայում և յենթաշըրջանային պատգամավոր. խմբակում, ամրացված է Լենինգրադսկայա փողոցին. նա մի շարք հետազոտություններ է արել (Թիֆլիսի սպառկոոպմիություն, Զագոտզերնո և այլ.) և նրա բոլոր առաջարկությունները սեկցիան միանգամայն նպատակահարմար գտավ — բայց կյանքի մեջ չեն կիրառվում.

զ) Թիֆլիսի խորհրդի անդամ ընկ. Զաուերը, աշխատելով ճանապարհա-կամրջային սեկցիայում, ակտիվ մասնակցություն է ունենում անխնամներին փողոցներից հեռացնելու և փոքրահասակների ծխախոտի վաճառման վերացնելու գործում. յերևան է բերել Վորոնցովսկի կամրջի վատ դրությունը, վորի մասին հայտնել է Թիֆխորհրդին, նորոգումն արդեն ավարտված է: Վորպես պատգամավոր. խմբակի անդամ Որջանային պատգամավորական խմբակում, ամրացված է հական բրիգադի և գործարանային բժշկի հետ շրջում է ցեխերը և գործարանի վարչության առաջ մի շարք հարցեր է դնում (ցեխերի մաքրության, արտաքնոցների համար խողովակների, փականների մասին և այլն): Մատնանշում է, վոր սեկցիայի և պատգամավոր. խմբակի բյուրոները կանխապես չեն հայտնում պատգամավորներին այն հարցերի մասին, վորոնք քննության են դրվում: Սեկցիան և պատգամավոր. խմբակըն ամենևին հաշվի չեն առնում պատգամավորների աշխատանքը:

ե) Ընկ. Տեր-Սախանյան — Կարլի գործարանի

բանվոր, Յերևանի խորհրդի անդամ, աշխատում ե կարի գործարանի կից պատգամավորական խմբակում, պատգամավոր. խմբակի բյուրոյի անդամ ե, աշխատում ե ակտիվ կերպով և յերևան ե բերել մի շարք թերություններ. գործարանում յերևան ե բերել գողություն, աշխդիսցիպլինայի խախտում, խուլիգանություն և այլն: Բացատրական աշխատանքի միջոցով այդ թերությունները վերացված են: Պատգամավոր. խմբակը հաջողեցրեց Յերևանի խորհրդի միջոցով ձեռք բերել 170 հազար ռուբլի՝ գործարանի բանվորների համար բնակելի տուն կառուցման համար: Մի շարք շաբաթօրյակներ ե կազմակերպել դեպի գործարանը տանող ճանապարհը կարգի գցելու համար. շնորհիվ պատգամավորների միջամտության, գործարանի ճաշարանն օրինակելի յե դարձած:

Խորհրդի անդամների աշխատանքները լավացնելու նպատակով, Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը վորոշում ե.

1. Պարտավորեցնել ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների Կենտգործկոմներին.

ա) Խորհուրդների աշխատանքում պատգամավորների գործնական մասնակցությունը ստուգելու համար 1935 թ. մայիս—հունիս ամիսների ընթացքում անցկացնել պատգամավորների մասնակցության ստուգատես՝ հետևյալ լոզունգով — «Վոչ մի պատգամավոր առանց խորհրդային բեռնավորման — առանձին պատգամավորների հաշվետվությամբ՝ ընտրողների առաջ՝ իր կատարած աշխատանքի մասին.

բ) Պատգամավորների աշխատանքի մեծ ակտիվության նպատակով, ապահովել խորհուրդների անդամ-



ների ճշգրիտ դասավորումը ըստ համապատասխան սեկցիաների, առանձին ուշադրություն դարձնելով սեկցիաների և պատգամավոր. խմբակների ղեկավարների ընտրության վրա, գործադրելով հրահանգչական խորհրդակցություններ՝ ու զրույցներ՝ խորհրդային շինարարության առանձին հարցերի վերաբերմամբ:

գ) Պարտավորեցնել ինքնավար հանրապետությունների ու մարզերի, շրջանային գործադիր կոմիտեների, քաղաքային և գյուղական խորհուրդներին, գործադրել՝ նախագահություններում պատգամավորների իրենց կատարած աշխատանքի հաշվետվությունների սիստեմատիկ ունկնդրումը, տալ նրանց համապատասխան հանձնարարություններ՝ կուսակցության և կառավարության վորոշումների կատարումը ստուգելու համար և ներգրավել նրանց՝ նախագահություններում քննարկվող առանձին հարցերի մշակման մեջ: Միաժամանակ ապահովել բոլոր պատգամավորներին իր ժամանակին տեղեկացնելը ինքնավար հանրապետությունների, մարզերի կենտգործկոմների նախագահությունների, շրջանային գործադիր կոմիտեների, քաղաքային և գյուղական խորհուրդների կարևոր վորոշումների մասին:

դ) Հավանություն տալ պատգամավորների աշխատանքների հաշվետվության այն ձևին, վորը գործադրվում ե Բաքվի խորհրդում, առաջարկել Անդրկենտգործկոմի կազմբաժնին այդ փորձը տեղափոխել բոլոր քաղաքային խորհուրդները:

յե) Պարտավորեցնել քաղխորհուրդներին ուժեղացնել աշխատանքը պատգամավորների հետ՝ նրանց կուլտուր-քաղաքական մակարդակը բարձրացնելու և

խորհրդային շինարարության հարցերի ուսումնասիրու-
մը՝ սեմինարներ, խորհրդակցություններ կազմակեր-
փակային խմբակների առանձին պատգամավորների աշ-
խատանքները :

2. Առաջարկել հանրապետական, մարզային և շըր-
ջանային թերթերին՝ մամուլի մեջ սիստեմատիկաբար
լուսաբանել խորհուրդների, սեկցիաների և պատվի-
րակային խմբակների առանձին պատվիրակների աշխա-
տանքները :

3. Հանձնարարել Յերևանի խորհրդի նախագահու-
թյան ստուգել կարի գործարանի պատգամավոր. խըմ-
բակի կազմակերպման կառուցվածքը և տասնօրյա
ժամկետում վերացնել գոյություն ունեցող թերու-
թյունները :

4. Հանձնարարել քաղխորհուրդների նախագահու-
թյուններին տասնօրյա ժամկետում պատգամավորնե-
րի մտցրած առաջարկությունների կատարման ստու-
գում անցկացնել՝ մասնավորապես Թիֆխորհուրդը,
չապ կերպով ստուգել պատգամավոր Կղխաշվիլու
բնակարանային սեկցիա մտցրած առաջարկության
չկատարելու պատճառները :

5. Ի գիտություն առնել կազմակերպչական բաժ-
նի վարիչ ընկ. Մելնիկովի հայտարարությունն այն
մասին, որ Նավթային սեկցիայի աշխատանքում ըն-
դած փաստերի մասին հաղորդածը քննության են առ-
նըված Բաքխորհրդում և գործնական միջոցներ են
ձեռք առնված, որոնք կապահովեն Նավթային սեկ-
ցիայի աշխատանքների լավացումը :

6. ԱՍՖՍՀ քաղաքային և գյուղական խորհուրդ-
ների աշխատանքի փորձի փոխանակման նպատակով,



հանձնարարել Անդրկենտգործկոմի կազմբաժնին 1935
թ. 4-րդ յեռամսյակում հրատարակել հանրամատչելի
գրքույկ՝ քաղաքային և գյուղական խորհուրդների 100
լավագույն պատգամավորների աշխատանքների մա-
սին :

Անդրկովկասյան Կենտգործկոմի նախագահ՝
Ս. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Անդրկովկասյան Կենտգործկոմի քարտուղար՝
Ս. ԹՈԴՐԻԱ

1935 թ. մայիս
Թիֆլիս

14

ՀՀ Ազգային գրադարան
NL0199740

# Ни одного депутата без советской нагрузки

Изд. Оргoтдела АзЦИКа

Баку—1935.